



## ՀԱՐՑԱԶՐՈՅՑ - Յուլիս 15, 2009

### ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ԳՈՀԱՐԻ ԽՄԲԱՎԱՐ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՍԵՊՈՒՀ ԱԲԳԱՐԵԱՆԻ ՀԵՏ

Սփիւռքի կազմավորման առաջին հանգրուանը հանդիսացող Հալեպ քաղաքը հայատրոփ, հայախօս, միատարր, որոշ շրջանակի մը մէջ փակուած ապրող, հազուադէպօրէն իր արանդուրթիւնները պահած գաղութներէն է, անցնող 70-80 տարիներուն ընթացքին այս քաղաքէն անցած են շատ մը երգչախումբեր, թատերախումբեր, արուեստագէտներ: ԳՈՀԱՐը տակաւին Հալեպ չհասած՝ արդէն իսկ կը վայելէ մեծ ժողովրդականութիւն: Կը յիշեմ, 1966-ին, երբ աշակերտ էինք, ներկայ գտնուեցանք Թաթուլ Ալթունեանի Երգի եւ Պարի Անսամպլին: Այսօր կ'ուզեմ կամուրջ մը նետել՝ ետդարձ մը կատարելով շուրջ 40 տարի առաջուան, այդ խումբի ելոյթներուն տպաւորութեան եւ այսօրուան մթնոլորտին, նախքան ձեր տալիք ելոյթները: Հիմա որ արդէն բարի եկած էք ձեր քաղաքը, նախքան ելոյթներու կայացումը, փափաքելի է լսել ձեզ՝ հարցազրոյցի մը ընդմէջէն:

ՀԱՐՑՈՒՄ.- Ժողովրդային առածը կ'ըսէ. «Ծառը իր պտուղէն կը ճանչցուի»: Կարելի է հակառակն ալ ճիշդ նկատել՝ «Պտուղն ալ՝ ծառէն»: Հալեպ քաղաքին մէջ տակաւին կ'ապրին այն սերունդին ներկայացուցիչները, որոնք աշակերտած են հորդ՝ հանրածանօթ դաստիարակ, մարմնամարզի ուսուցիչ եւ սկաուտապետ Լեւոն Աբգարեանին, որ պաշտօնավարած է Հալեպի կարգ մը վարժարաններու մէջ, ոմանք իր սկաուտները եղած են «Տարօնի արծի» ակումբին մէջ եւ բախտաւորուած իր հետ բանակումներու մասնակցելով: Անցնող օրերուն հանդիպեցայ յիշեալներէն ոմանց հետ: Տակաւին շատեր չեն գիտեր, թէ Սեպուհ Աբգարեան տարօնածին Լեւոն Աբգարեանի որդին է: Կարելի է՝ հակիրճ տողերու մէջ ծանօթանալ ձեր կեանքի հանգրուաններուն, եւ թէ ի՞նչ կ'ըսէ Հալեպ քաղաքը ձեզի:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Շատ քիչ վայելած եմ Հալեպ քաղաքը: Հայրս շատ կանուխ Պէյրութ փոխադրուեցաւ, երբ տակաւին մանուկ էի եւ ձեռով մը անտեղեակ՝ զանազան երկրային այդ նոր միջավայրերուն: Լիբանանի միջավայրը աւելի ազդած է վրաս, ուր մինչեւ 13 տարեկան մնացած եմ, յետոյ դարձեալ Հալեպ եմք: Հայրս մնայուն կերպով իր ընտանիքը հոս պահած է եւ ունեցած է մարմնամարզական եւ արհական բեղուն գործունէութիւն՝ մեծ թիւով վարժարաններու մէջ: Նախ՝ Հայկազեանի մէջ, ուր բազմաթիւ աշակերտներ ունեցած է, շատեր կեանքի ընթացքին հասած են բարձր դիրքերու՝ ըլլա՛յ գրական շրջանակէ ներս, թէ գիտական կամ այլ ասպարէզներու մէջ: Անշուշտ սկզբնական շրջանին կը յիշեմ, թէ ՀՄԸՄը՝ Հալեպի մէջ հիմնուեցաւ Արարատ Քրիսեանի ջանքերով՝ «Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն» անունով: 19-րդ դարու վերջաւորութեան հայրս եւ քանի մը պատանիներ քով-քովի գալով՝ հիմնած են «Արարատ» ակումբը, կարգախօս ունենալով «Առողջ միտք առողջ մարմնի մէջ»: Իր կեանքի վերջալոյսին անհաճոյ դէպքեր պատահեցան: Ինք այնքան լայնասիրտ էր, որ ոչ մէկ ակնարկութիւն իսկ ըրաւ, իր հեծանիւով զանազան տեղեր երթալով՝ մարմնամարզական հոյլեր հիմնեց մինչեւ Գամիշլի, որովհետեւ ան կը հաւատար, թէ մարզանքէն իսկ կը բխի հայասիրութիւնը: Կապելով ձեր հարցին՝ Հալեպը ինձի համար հեքիաթին վերջաբանը պիտի չըսեմ, բայց վերջին հրաշքներէն մէկն է: Երբ այս առաւօտ Հալեպի հին թաղերը կը պտտէի, դժուար ապրումներ ունեցայ: Ակնոցս կրցաւ պահել այն ներքին փոթորիկը, որ տեղի ունեցաւ, որովհետեւ 94 տարիներ առաջ, երբ հայրս 16 տարեկան էր, Հալեպի բերդին մէջ բանտարկուած, սասունցի այդ կայտառ պատանին մահապատիժ մը փախած ըլլալով, հօգօր, պայքարող եւ կամքի տէր, կեանքը սիրող, իրեն հետ ազատելով 5 ուրիշ զանազան գաղափարներու ծառայող հայեր, որոնք յանձնուած էին մահուան:

Այսօր, նոյն այդ բերդին մէջ ելոյթ պիտի ունենայ իր որդին՝ «Բոլոր ժամանակներու հայկական սիրուած երգերով»:

Այս նոյն բերդէն էր, որ հօրս նման, հազարաւոր հայորդիներ անցան, շատեր Պապ Էլ Ֆարաճի հրապարակը կախուեցան, ուրիշներ կարաւաններով տարուեցան Տէր Զօր եւ նահատակուեցան: Սուրիան պատճառ եղած է, որ հայու բեկորները, որոնք կարողացած են ճողոպրիլ այդ ահաւոր դէպքերէն, վերապրին եւ այստեղէն հայութիւնը նոր աղբիւր մը ստանայ եւ տարածուի դէպի Լիբանան եւ արտասահման, ու հայութեան այդ բեկորներն են, որոնք կիլիկեան Հայաստանի գաւակներն են: Ա՛յս է իմ մէջս Հալէպը:

Հ.- Մենք կը յիշենք ձեր առինքնող ձայնը Կիպրոսի հայկական ռատիոժամէն՝ 1960-ական թուականներէն սկսեալ: Կարելի է՞ որոշ տեղեկութիւն մը տալ այդ շրջանին եւ ռատիոժամին մասին:

Պ.- 1954 թուականին, յարգելով իմ համաձայնութիւնս Մելգոնեան կրթական հաստատութեան հետ, Փարիզէն վերադարձայ նկարչական ուսումնաւարտելէ ետք՝ Աքատեմիք տը լա կրանտ Շոմիէր Օկիւսթ Ռոտէնի դպրոցին եւ երաժշտանոցին մէջ: Ապա վերադարձայ Կիպրոս եւ կոչուեցայ կրթական մարզին՝ դաստիարակելով այն աշակերտները, որոնք նկարչութեան տաղանդ ունէին, բայց պէտք էր այդ տաղանդը կաղապարի մը մէջ հոսեցնել եւ պատրաստել որպէս նկարիչ, նոյնիսկ եթէ նկարիչ չըլլային, գէթ ունենային գեղագիտական բարձր ճաշակ: Շատ ուրախ եմ, որ կարողացայ 50 տարի այդ մէկը ընել Մելքոնեանէն ներս, նմանապէս՝ երաժշտական դաստիարակութիւնը բաւական բարձր դիրքի հասաւ եւ շարունակեցի գիտութիւնս փոխանցել ներկայ սերունդներուն, որոնք հայութեան զանազան դասակարգային խաւերէ կու գային: Անխտիր բոլորին ծառայելու պատրաստակամութիւնն է, որ ունեցած եմ: Այս շրջանին է, երբ Մելքոնեանի մէջ էր Վահրամ Մավեանը, Երուսաղէմի Մելիքեան-Ուզունեան վարժարանէն եկած 1948-ին, որպէս ուսուցիչ: Անոր կարգ մը բանաստեղծութիւնները լոյս տեսած էին «Սիոն»ի մէջ: Հոն էր նաեւ Անգինէ Քելշեան-Մուրատեանը, աւելի ուշ եկաւ Վազգէն Ա. քինյ. Տարագճեանը, երբ տակաւին աշխարհական էր եւ բոլորս միասնաբար հիմնեցինք Կիպրոսի հայկական ռատիոժամը: Ամէնէն երիտասարդը ըլլալով՝ գլխաւոր աշխատանքը եւ ստանձնեցի եւ վարեցի զայն անխափան, հայկական մշակոյթի քարոզչութիւնը ընելով Կիպրոսի կառավարութեան ընձեռած ռատիոկայանի ամսական երկու ժամերը օգտագործելով: Խմբակի անդամները կամաց-կամաց մեկնեցան եւ ամբողջ բեռը մնաց ուսերուս, եւ ես զայն տարի մեծ երջանկութեամբ: Անոր մէկ արդիւնքն ալ այսօր կը վայելեմ, որովհետեւ մեր Հայրօնը (Այս անուանակոչութիւնը եւ կատարած եմ ԳՈՀԱՐ-ի մեկենաս Խաչատուրեան եղբայրներու երեցին, հայր բառը ընդունելով դէպի առաջ) գաւակն է լիբանանահայ հանրածանօթ անձնաւորութեան մը, որ այնքան սիրած է հայ երգը, ամէն կիրակի ռատիոյին շուրջ հաւաքելով իր երեք որդիները, ձեռքերնին երգարան տալով՝ հետեւած եւ սորված են մեր սփռած երգերը: Հետագային, չորեքշաբթի օրերն ալ աւելցան, ապա ամէնօրեայ դարձաւ: Այսպիսով, թրքական երգերու տիրապետութիւնը փոխուեցաւ, այդ շրջանի էտրպատային եւ աշուղական երգիչներ Ատիսի, Լեւոն Գաթրճեանի, Վարդիվառի, Արա Կիրակոսեանի երգերով:

Հ.- Ովքե՞ր եղած են ձեր հայերէն լեզուի եւ երաժշտութեան ուսուցիչները, որոնք ազդեցութիւն ունեցած են ձեր ասպարեզին մէջ:

Պ.- Սկզբնական շրջանին Պէրրոսի Ս. Նշան Ազգ. վարժարանին մէջ մեր հայերէնի լեզուի ուսուցիչն էր Եղուարդ Տարօնեանը, բացառիկ անձնաւորութիւն մը, հայերէնի գիտակ: Ապա շրջան մը փոխադրուեցանք Հալէպ: Միխիթարեան վարժարանին մէջ Գալիկեան վանեցի անձնաւորութիւն մըն էր: Ան շատ կը հասնէր իմ շարադրութիւններս: Հետագային երբ Մելքոնեան յաճախեցի, իմ վրաս մեծ ազդեցութիւն ունեցաւ Վահէ Վահեան (Սարգիս Ապտալեան) եւ Ներսէս Կատար (Ներսէս Թամամեան): Երէկ, երբ Համա էի, խորհրդածեցի եւ յիշեցի ուսուցիչս: Ան պատմած էր, թէ որպէս հովիւ Եղեռնէն ճողոպրած, ապաստանած էր Համա, որովհետեւ Ուրֆայէն տեղահանուած իր ընտանիքին 40 անդամները մորթուած էին անապատին մէջ: Ան կարողացած էր դուրս գալ դիակներու կոյտի տակէն եւ հասնիլ

Համա ու ապաստանիլ հայկական որբանոցը: Մեր գրականության հանդէպ ունեցած հետաքրքրութիւնս պատճառ դարձաւ ինքնակերտումիս եւ հայոց լեզուիս կոկումիս: Պէրուօի Ս. Նշան վարժարանին մէջ երաժշտութեան ուսուցիչս էր անմահանուն Բարսեղ Կանաչեան, որ մեծ ազդեցութիւն ունեցաւ երաժշտական նախասիրութիւնս զարգացնելու առումով:

Հ.- Ի՞նչ պայմաններու մէջ եւ ե՞րբ հիմնուեցաւ ԳՈՀԱՐ: Ովքե՞ր են այս խումբին հիմնադիրները:

Պ.- Մելքոնեան կրթական հաստատութիւնը հիմնուած է բարոյական սկզբունքներու եւ ըմբոսնումներու վրայ եւ այս մէկը մղիչ ուժ եղած է, որ մելքոնեանցիներ պատրաստուին որպէս ուսուցիչ, դաստիարակ, հասարակական գործիչ, առաջնորդ, հռետոր, դերասան, երաժիշտ: Վերջին տարիներուն, Ալէք Մանուկեանի մահէն ետք, զինք փոխարինողներ արմատականօրէն խախտեցին այս սկզբունքները: Կարծես դիտարեալ ձգտում մը կար: Տեղւոյն պարբերաթերթին՝ «Փարոս»ին մէջ բաց նամակ մը գրեցի, ուղղուած հաստատութեան տնօրէնուհիին, ազնիւ ոճով, բացատրելով երկար տարիներու որպէս լուսատու պաշտօնեայ, յիշեցնելով մեր ուղեգիծը սերունդներու դաստիարակութեան մէջ: Դժբախտաբար այս նամակը գիտակցութեամբ չընկալուեցաւ: Ան բորբոքեցաւ, եւ աստիճանաբար ես դարձայ անբաղձալի, երգչախումբի աշխատանքներս սահմանափակուեցան եւ ստիպուեցայ ներկայացնել հրաժարականս ու ըսի՝ «մնաք բարով Մելքոնեան»:

1999-ին Կիպրոսի պանդոկներէն մէկուն մէջ հանդիպեցայ վերջին տարեշրջանի աշակերտներէ՝ Սարօ եւ Սեւակ Մերոբեան եղբայրներուն, որոնք կ'ընկերակցէր անձնատրոյթիւն մը՝ ԳՈՀԱՐ-ի այսօրուայ հայրօնը: Երբ տեղեկացաւ Մելքոնեանէն դադրած ըլլալս, հայրօնը առաջարկեց Հայաստանի Արամ Խաչատրեանի համերգասրահին մէջ ղեկավարել 250 հոգինոց երգչախումբը եւ 175 հոգինոց սիմֆոնիք նուագախումբը: Պահ մը երազային կատակ մը կարծեցի, ապա ան հաստատեց պատասխան ուզելու պայմանաժամը:

Երգացանկս անմիջապէս կազմեցի եւ երեք օր ետք մեկնեցայ Երեւան: 3 փորձ ընելէ ետք, ֆիլիարմոնիայի սրահին մէջ 1 ունկնդիր միայն ներկայացաւ, որն էր մեր հայրօնը եւ այդտեղ ընդունեց իմ առաջին ունկնդրութիւնս: Ելոյթը կրկնեցի օփերայի սրահին մէջ՝ ներկայութեամբ երաժիշտներու եւ բարեկամներու:

Վերադարձայ Կիպրոս եւ երեք շաբաթ ետք նամակ մը ստացայ, որ կը հրաւիրէր զիս ադէտի գօտիի Գիւմրի քաղաքին մէջ հիմնելու երգչախումբ մը: Գիւմրիին որպէս վայր ընտրած էր, որպէսզի ադէտի գօտիին մէջ գործի հրաւիրէր արուեստասէր եւ շնորհալի տարրերը:

Սկսայ աշխատանքի՝ նախ երգող անդամներու ընտրութեամբ: Ներկայացող հինգ հարիւր հոգիին մէջէն ընտրեցի 120 հոգի, որմէ գտեցի եւ մնաց 100 հոգի, 1999-ի վերջին ամիսներուն: Հայրօնը ներկայացաւ եւ ունկնդրեց խումբը: Զգալով մեծ յառաջդիմութիւն եւ, այսպէս, 2000 թուականին մենք սկսանք աշխատանքի: Առաջարկեցի նուագախումբով օժտել խումբը, սկսանք լարայինով, որուն յաջորդեց փայտափողայինը, պղնձափողայինը, յետոյ հարուածային ունեցանք: 2002-ի սկզբնաւորութեան որոշուեցաւ մեկնիլ արտասահման, առաջին հերթին իմ աշխատանքի շրջանս՝ Կիպրոս: Մայիս ամսուան վերջաւորութեան աննախընթաց էլոյթ մը ունեցանք Կիպրոսի մէջ, ուր Մելքոնեան կրթական հաստատութեան աշակերտները հրաւիրուեցան ձեռնարկին: Տնօրէնուհին արգիլեց անոնց ներկայութիւնը՝ պատրուակելով փորձ քննութիւնները, որոնք պիտի կայանային 1 ամիս ետք: Կարգ մը աշակերտներ փախստական, գաղտնի ներկայ գտնուեցան եւ մեր համբարը տարածուեցաւ դպրոցական միջավայրին մէջ:

Հ.- Խումբը արհեստավարժ է: Այլ խումբերու կ'անդամակցի՞ն, թէ՞ զուտ ԳՈՀԱՐ-ական են:

Պ.- Խումբը ամբողջութեամբ, Գիւմրիի բնակիչ արուեստագէտներէ կը բաղկանայ: Կան սակաւաթիւ տարրեր, որոնք կը գործեն այլ տեղեր, սակայն անոնք նախ ԳՈՀԱՐ-ական են, ապա՝ այլ խումբի անդամ:

Հ.- Սփիւռքի զանազան գաղութներ այցելած էք ԳՈՀԱՐ-ին հետ՝ Պէրուօ, Մոսկուա, Միացեալ

Նահանգներ, Պոլիս:

Պ.- Կարգով թուեմ մեր այցելած գաղութները: Առաջին հերթին, ինչպես յիշեցինք, Կիպրոս, ապա՝ Լիբանան, Կ. Պոլիս, Մոսկուա, Կրեմլին, Միացեալ Նահանգներու զանազան շրջաններ, Քանատա եւ վերջաւորութեան եղանք «Գառնիկ»ի սրահին մէջ, ուր շատ քիչերու վիճակուած է ելոյթ ունենալ: Երկրորդ հանգրուանը Պէրուին էր, ուր ելոյթ ունեցանք 2002-ի Յունիս ամսուան ընթացքին, Պիէլի մէջ, ուր չկային ձայնային եւ թատերական յարմարութիւններ: Հոս նաեւ մեր հայրօնը իր նիւթական միջոցներով բարեգարդեց եւ յարմարութիւններ ստեղծեց: Պէրուի մէջ ալ մենք ունեցանք երեք ելոյթ: Հետագային, 2003-ի ընթացքին երբ հրապարակուեցաւ մեր առաջին տեսահոլովակը, Համպուրկ քաղաքին մէջ, 127 ազգերու մասնակցութեամբ, մեր խումբը շահեցաւ արծաթեայ մրցանակը, ուր ներկայ գտնուեցայ եւ ելոյթ ունեցայ: Մեծ ուրախութեամբ մեր ստացած մրցանակը նուիրեցի տիկին Գոհար Խաչատուրեանին:

Հ.- Ի՞նչ էին ձեր զգացումները, երբ ԳՈՀԱԲ-ը ղեկավարեցիք Պոլսոյ մէջ, ուր Կոմիտաս վարդապետ ղեկավարած է 300 անդամներէ բաղկացած ԳՈՒՄԱՆ երգչախումբը:

Պ.- Կ. Պոլիս մեր այցելութիւնը իրականացաւ շնորհիւ մեր հայրօնի անձնական ջանքերուն: 2005-ին, Մեծ եղեռնի 90 ամեակն էր: Մենք ելոյթ ունեցանք թատերասրահի մը մէջ, ուր տեղադրուած էր հանրապետութեան հիմնադիրին մեծադիր նկարը: Մեր 130 հոգիւնց խումբը հնչեցուց հայ մշակոյթի գանձարանէն բոլոր ժամանակներու սիրուած երգերը, չորս երեկոյթ: Այդ քաղաքին մէջ էր, որ 1908-էն սկսեալ Կոմիտաս վարդապետ կազմած է 300 հոգիւնց ԳՈՒՄԱՆ երգչախումբը: Հնչած են կոմիտասեան երգերը իր աշակերտներուն հետ, որոնցմէ էին՝ Բարսեղ Կանաչեան, Միհրան Թումաճեան, Սրուանձտեանց, Վարդան Սարգիսեան, հետագայ երաժշտագետներ:

Հ.- Ձեր երգացանկի ընտրութիւնը ինչպե՞ս կը կատարէք:

Պ.- Յանձնախումբ մը կայ, որուն կը ներկայացնեն երգացանկը: Ան կը սերտէ՝ համախորհուրդ հայրօնի հետ: Կայ նաեւ երգերու յաջորդականութիւնը յարմարեցնելու հարցը: «Հայկական բոլոր ժամանակներու սիրուած երգերը»: Այս ընտրած ենք մեր լոգունգը:

Հ.- ԳՈՀԱԲ-ի նիւթաբարոյական այս հսկայական ծախսերը այլ աղբիւրներ ալ ունի՞ն:

Պ.- Բացարձակապէս: Լիբանանահայ Խաչատուրեան երեք եղբայրները ամբողջովին կը հոգան խումբին շրջապտոյտի, կեցութեան եւ անդամներու պատուեզիները: Նոյնիսկ ելոյթներու հասոյթը ամբողջութեամբ կը բաշխուի՝ նպաստելով ԱԲԳ-ի գոյատեւման նպատակին:

Հ.- ԳՈՀԱԲ-ի այսքան ժողովրդականութեան գաղտնիքը ո՞ր կը կայանայ:

Պ.- Մեր Հայրօնի տեսլականն է: Եւ այդ տեսլականի ուղիին մէջ իր ունեցած վստահութիւնը՝ մեր տուած տեղեկութիւններուն մասին: Խումբը կոչած են ԳՈՀԱԲ, իրենց մօր անունով: Իսկ երբ կ'երգենք հօր նուիրուած երգը, անոնք այդ մթնոլորտին մէջ ԱԲԳ-ը կը տեսնեն, որ ծնողական դաստիարակութեան արդիւնքն է, որ իրենց մէջ դրոշմած է այդ տառերուն հանդէպ պաշտամունք մը: Ձեռով մը ԱԲԳ-ին կը պարտինք այս երգերուն գոյութիւնը եւ յարատեւութիւնը: ԳՈՀԱԲ-ը կոչուած է պանծացնելու հայ երգը եւ հայոց տառերը:

Հ.- Ձեր անունը առնչութիւն ունի Մելքոնեան կրթական հաստատութեան հետ: Ձեր շունչն ու երաժշտական գիտելիքները փոխանցած էք սերունդներու: Ի՞նչ են ձեր տպաւորութիւնները այս հաստատութեան փակման մասին:

Պ.- Ես կտրականօրէն դէմ եմ հաստատութեան փակման որոշումին: Հայ ժողովուրդը հինէն ի վեր իր

պատմութեան ընթացքին երկու մեծ սրբութիւններ ունի: Մին Հայ եկեղեցին է, միւսը՝ հայ դպրոցը: Հայ եկեղեցի կը հիմնուի եւ չի փակուիր, եթէ նոյնիսկ այսօր Թրքահայաստանի մէջ կան փակուած եկեղեցիներ, ատիկա թշնամիի ընթացքին հետեւանքն է: Հայ դպրոցը այն լոյսի կեդրոնն է, որ կը հիմնուի եւ չի փակուիր: Դամասկոսի մէջ արդէն հինգշաբթի, 9 յուլիսի երեկոյեան Տար Ասատ օփերայի բեմին վրայ թնդաց հայ երգը «աննախընթաց»՝ բազմաչարչար այս բառը իր իսկական իմաստը ստացաւ այդ ելոյթին առիթով: Յառաջիկայ օրերուն Հալէպի պատմական բերդի թատրոնի բեմահարթակին վրայ ելոյթ պիտի ունենայ ԳՈՀԱԸ-ը, յաջորդական երեք օրերու ընթացքին, մօտաւորապէս վեց հազար հանդիսատեսներու պիտի ընծայէ անմոռանալի պահեր: Այս առիթով Մուրիոյ շրջաններէն հայորդիներ, Սփիւռքի զանազան գաղութներէն Հալէպ այցելողներ, ինչպէս նաեւ Լիբանանէն յատուկ կարգադրութեամբ Հալէպ ժամանող հայ երգի սիրահարները պիտի վայելեն «ՀԱԼԷՊԻ ԳՈՀԱՐԵԱՆ ԳԻՇԵՐՆԵՐԸ»:

Հարցազրոյցը վարեց  
ՄԱԹԻԿ ԷՊԼԻՂԱԹԵԱՆ

Հալէպ, 11 յուլիս, 2009